«ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
"DEVELOPMENT OF MEGHRI REGION" CHERITABLE FOUNDATION

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա, 19/1 շենք, 23/1 տարածք
RA, Yerevan, Komitas Avenue, apt. 19/1, office 23/1
Հեռ/Tel: +374-98-51-32-33
email: developmentofmeghriregion@gmail.com

No Ել-05042021
«05» 04 2021 թ.

Մեղրիի համայնքի ղեկավար՝
պարոն Մխիթար Զաքարյանին
meghri.syuniq@mta.gov.am
nrnadzor@mail.ru

Հարգելի՛ պարոն Զաքարյան,

ՀՀ-ում ստեղծված հետպատերազմական պայմաններում, մեր կարծիքով, շատ կարևոր է բոլորիս մասնակցությունը հայրենիքի շենացման գործընթացին:

Հայտնում ենք Ձեզ, որ մեր կողմից առկա է ցանկություն հայրենիքի շենացման գործընթացը մեկնարկել Նռնաձոր համայնքից:

Այդ կապակցությամբ Ձեզ ենք ներկայացնում «ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների կողմից հաստատված ծրագիրը և առաջարկում քննարկել համայնքի ավագանու առաջիկա նիստում և հաստատել՝ ապահովելով դրանից բխող համապատասխան իրավական ակտերի ընդունումը:

Առդիր՝ 4 էջ:

Հարգանքով՝ Գուրգեն Գրիգորյան

«ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 00231834

Հավելված՝
«ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ»
բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների թիվ 1 որոշման

ԾՐԱԳԻՐ՝

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Նպատակը.

ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձոր համայնքի զարգացման ծրագիրը /այսուհետ՝ Ծրագիր/ հանդիսանում է «ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» բարեգործական հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամ/, կողմից իրականացվող նախաձեռնություն, որի նպատակն է աջակցել Արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված ընտանիքներին, բարելավել հետպատերազմական պայմաններում գտնվող անձանց սոցիալական դրությունը, զարգացնել սահմանամերձ համայնքը, լուծել զբաղվածության խնդիրներ՝ ապահովելով աշխատանքի պայմաններ՝ հիմնելով կոոպերատիվ տնտեսություն, զարկ տալ համայնքի տնտեսությանը, ստեղծել պայմաններ՝ բնակության համար /այսուհետ՝ բոլորը միասին՝ Նպատակ/:

Նռնաձոր

1. https://www.google.com/maps/place/Nrnadzor+3407,+Armenia/@38.9169982,46.4339733,15z/data=!3m1!4b1!4m5!3m4!1s0x401652af998b211f:0x7c7fd1748ce19ba1!8m2!3d38.9153685!4d46.442281
2. https://en.wikipedia.org/wiki/Nrnadzor

Պատմական ակնարկ.

«Կովկասյան օրացույց»-ում («Кавказский Календарь») (1894 թվական) նշվում է Նյուվադի գյուղը՝ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի հատված, որի բնակչությունը՝ 1083 հոգի, թաթեր են: Նյուվադի գյուղը 1928 թվականին միացվել է Խորհրդային Հայաստանին, իսկ մինչ այդ եղել է Խորհրդային Ադրբեջանի կազմում:

Խորհրդային տարիներին Հայաստանում չեն եղել թաթերենով դպրոցներ: Իրանախոս թաթերը, ինչպես և քրդերը, հաճախել են ադրբեջանական դպրոցներ:

Ադրբեջանական աղբյուրները նշում են, որ Նյուվադին եղել է վերջին ադրբեջանական գյուղը, որտեղից հեռացել են նրա բնակիչները: Դա տեղի է ունեցել 1991 թվականի ամռանը: Այդ գյուղը պաշտպանում էին խորհրդային զորքերը: Իրականում, Նյուվադիի մուսուլման բնակիչները եղել են թաթեր, որոնք տասնամյակների ընթացքում, ինչպես հազարավոր թաթեր Խորհրդային

Ադրբեջանում, դարձել են ադրբեջանցի: 1831-ից 1931 թվականների մարդահամարների և հաշվառումների ժամանակ թաթերը տարբեր կերպ են արձանագրվել՝ իսլամ, թաթար, թրքո-թաթար, թուրքական խումբ:

Նյուվադին՝ այսօրվա Նռնաձորը, գտնվում է Հայաստանի ամենահարավային հատվածում՝ Արաքս գետի ափին: Այսօր Նռնաձորում բնակիչները հայեր են, որոնք այստեղ են տեղափոխվել Խորհրդային Ադրբեջանի տարբեր բնակավայրերից 1991 թվականի երկրորդ կեսից հետո:

Ենթակառուցվածքներ.

Նռնաձոր, գյուղ Հայաստանի Սյունիքի մարզում, Մեղրու շրջանում: Հեռավորությունը Երևանից 435 կմ, Մեղրուց 30 կմ, Շվանիձոր գյուղից 5 կմ: Գյուղը գտվում է հայ-ադրբեջանական սահմանից 3-4 կմ հեռավորության վրա: Գյուղին պատկանող հողատարածքներում աճեցվում է նուռ, թութ, թուզ, խռնիկ: Կան նաև վայրի նռան ծառեր: Լեռներում հանդիպում է արջ, հովազ, վարազ, գայլ, եղջերու:

Շվանիձորից մինչև Նռնաձոր ճանապարհը գրունտային է: Առաջիկայում նախատեսվում է այս ճանապարհատվածը ասֆալտապատել:

Գյուղում առկա է՝

ա/ միջնակարգ դպրոց 23 աշակերտներով

բ/ էլեկրաէներգիա

գ/ խմելու ջուր

դ/ բջջային հեռախոսակապ /Վիվա սելլ/

ե/ ինտերնետ կապ

զ/ գյուղամիջյան ճանապարհները գրունտային են

է/ գյուղում առկա է բուժ ամբուլատորիա

ը/ գործում է Մեղրի – Նռնաձոր – Մեղրի համայքնային տրանսպորտ

Նպատակի կյանքի կոչում.

Նպատակին հասնելու համար նախատեսվում է նշված համայնքում իրականացնել առաջին փուլում 30 անհատական բնակելի տների կառուցապատում և Արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված ընտանիքների վերաբնակեցում:

Հատկացվելիք գույքի կազմը և պայմանները.

ա/ 600-700քմ տնամերձ հողամաս

բ/ անհատական բնակելի տուն՝ նկուղով, մուտքը տնից, որը կարող է օգտագործվել տնտեսական կարիքների համար: Անհրաժեշտության դեպքում այն կարող է ծառայել որպես ապաստարան /հատակագիծը կցվում է/

գ/ յուրաքանչյուր ընտանիքի տրվելու է մեկ խոշոր եղջերավոր անասուն, որի նպատակով կառուցվելու է նաև միասնական գոմ

դ/ վերաբնակեցված ընտանիքում նոր երեխայի ծննդյան դեպքում բացի պետական և համայնքային աջակցության ծրագրերից տրվելու է նաև մեկ խոշոր եղջերավոր անասուն:

ե/ համայնքը հատկացնելու է մեկ ընտանիքի հաշվարկով առնվազն 1հա հողամաս այգեգործական գործունեություն իրականացնելու նպատակով: /Նախատեսվում է ստեղծել կոոպերատիվ տնտեսություն/

զ/ համաձայն ՀՀ կառավարության որոշման Նոնաձոր գյուղը հանդիսանում է սահմանամերձ և գյուղի վարչական սահմաններում իրականացվող տնտեսական գործունեությունը ազատվում է հարկերից:

է/ գյուղում ապրող աշակերտներին դպրոցական դասագրքերը կտրամադրվեն անվճար:

ը/ ՀՀ կառավարության կողմից կփոխատուցվի վերոնշյալ բնակավայրում ապրող բնակիչների անշարժ գույքի հարկը (2021 թվականի հունվարի 1–ից հետո ծագած հարաբերությունների դեպքում), 50 տոկոսով կփոխհատուցվեն նաև 2021 թվականի փետրվարի 1-ից հետո սպառած բնական գազի և էլեկտրաէներգիայի, օգտագործած ոռոգման ջրի վճարները:

Միջոցներ.

Նախատեսվում է ֆինանսական միջոցների հավաքագրում՝ Հիմնադրամի հիմնադիրների անձնական, ինչպես նաև՝ վերջիններիս հետ փոխկապակցված անձանց միջոցներից, տարբեր հիմնադրամներից, սփյուռքյան կառույցներից և այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից՝ կամավորության սկզբունքի հիման վրա:

Ապագա շահառուներ.

Ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ այն անձիք, որոնք

ա/ հանդիսացել են մինչև 27.09.2020 թ. ԼՂՀ տարածքից դուրս վերաբնակեցված ընտանիք

բ/ Արցախյան պատերազմի հետևանքով տեղահանվել են իրենց բնակավայրից, որը ներկայումս ժամանակավոր գտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո

գ/ հանդիսանում են բազմազավակ ընտանիքներ /4 և ավելի երեխաներ/ կամ ունեն ազնվազն երկու անչափահաս երեխա և առաջիկա 3-5 տարիներին պլանավորում են ունենալ առնվազն ևս երկու երեխա:

դ/ չեն օգտվել բնակարանային ապահովման պետական կամ այլ որևէ ծրագրից

ե/ Հայաստանի Հանրապետության տարածքում չունեն մշտական բնակատեղի և սեփականություն:

Առավելություն է տրվում այն ընտանիքներին, որոնց ամուսիններից որևէ մեկը հանդիսանում է մանկավարժ՝ Մեղրիի համայնքապետարանի կողմից առաջարկվող առարկաների գծով: Այս ընտանիքի անդամի աշխատանքի ապահովումը տեղի միջնակարգ դպրոցում երաշխավորվում է /ենթակա է հաստատման Սյունիքի մարզպետարանի կողմից/:

Ծրագրի մեկնարկ, աջակցություն.

Համայնքի կողմից Հիմնադրամին հողամասի, ինչպես նաև՝ Հիմնադրամի կողմից ներկայացվող էսքիզային նախագծի կյանքի կոչման համար պահանջվող քաղաքաշինական փաստաթղթերի ու թույլտվությունների տրամադրում, ենթակառուցվածքների ու տեխնիկական պայմանների ապահովում, թաղամասի գլխավոր հատակագծի հաստատում, հողահատկացում՝ կառուցապատում իրականացվելու նպատակով:

Իրավական ռեժիմը.

Հողամասը՝ համայնքային սեփականություն, կառուցված անշարժ գույքերը՝ Հիմնադրամի սեփականություն:

- Շահառուներին անշարժ գույքի տրամադրում՝ օգտագործման իրավունքով՝ հետևյալ պայմաններով՝

ա/ առնվազն տասը տարի անընդմեջ մշտական բնակության դեպքում կդառնան սեփականատեր

բ/ տարվա առնվազն 300 օրը պետք է բնակվեն գյուղում

գ/ գույքը չի կարող տրվել վարձակալության, գրավադրվել, օտարվել կամ այլ կերպ ծանրաբեռնվել:

Ծանոթություն.

Ծրագիրը փաստացի մեկնարկել է 2021 թվականի մարտի 15-ին և իրականացվել են գեոդեզիական-քարտեզագրման, հողային աշխատանքները, սկսվել են արդեն երկու անհատական բնակելի տների շինարարությունը:

Ծրագրի պաշտոնական բացումը նախատեսվում է իրականացնել 2021 թվականի մայիսի 8-ին: